ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-739-05.12.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 159-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում ներդրված գումարը՝ ներդրման չափով, բայց ոչ ավելի, քան շահաբաժիններից պետական բյուջե վճարված հարկի գումարները, պետական բյուջեից փոխհատուցվում է Կառավարության սահմանած կարգով՝ հաշվի առնելով սույն մասով սահմանված սահմանափակումները:

Սույն մասով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցում չի կատարվում, եթե շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը 2025 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով ձևավորվող շահույթից բաշխվող շահաբաժիններից վճարված եկամտային հարկի փոխհատուցման դիմումները հարկային մարմին ներկայացնելու օրը ներառող հարկային տարվա և (կամ) նախորդ հարկային տարվա ընթացքում ունեցել է անբողոքարկելի դարձած ստուգման կամ այլ վարչական ակտով արձանագրված՝

1) Օրենսգրքի 408-րդ կամ 410-րդ կամ 415-րդ հոդվածների պահանջներից որևէ մեկով խախտում,

2) Օրենսգրքի 412-րդ հոդվածի պահանջների երկու և ավելի անգամ խախտում,

3) Օրենսգրքի 416-րդ հոդվածի պահանջների երեք և ավելի անգամ խախտում:

Սույն մասի երկրորդ պարբերությունում նշված խախտումներին վերաբերող ստուգման կամ այլ վարչական ակտի վարչական կամ դատական կարգով բողոքարկման արդյունքում

ստուգման կամ այլ վարչական ակտի ուժի մեջ մնալը հիմք չէ սույն մասով նախատեսված դիմումների հիման վրա եկամտային հարկի փոխհատուցված գումարները պետական բյուջե վերադարձնելու համար:»:

Հոդված 2. Օրենսգրքի 336-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3.

1. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված սահմանափակումների կիրառության առումով հաշվի են առնվում միայն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված՝ սույն օրենքով սահմանված իրավախախտումները:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-739-28.11.2023-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության ~~2016 թվականի հոկտեմբերի 4-ի~~ հարկային օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում ներդրված գումարը՝ ներդրման չափով, բայց ոչ ավելի, քան շահաբաժիններից պետական բյուջե վճարված հարկի գումարները, պետական բյուջեից փոխհատուցվում է Կառավարության սահմանած կարգով՝ հաշվի առնելով սույն մասով սահմանված սահմանափակումները:

~~Սույն մասով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցում չի կատարվում, եթե շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը ստացված շահաբաժիններից ֆիզիկական անձի վճարած եկամտային հարկի փոխհատուցման դիմումները հարկային մարմին ներկայացնելու օրը ներառող հարկային տարվա եւ (կամ) նախորդ հարկային տարվա ընթացքում ունեցել է անբողոքարկելի դարձած վարչական ակտով արձանագրված՝ Օրենսգրքի 408-րդ կամ 410-րդ կամ 412-րդ կամ 415-րդ կամ 416-րդ հոդվածների պահանջներից որեւէ մեկով խախտում:~~

Սույն մասով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցում չի կատարվում, եթե շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը 2025 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով ձևավորվող շահույթից բաշխվող շահաբաժիններից

վճարված եկամտային հարկի փոխհատուցման դիմումները հարկային մարմին ներկայացնելու օրը ներառող հարկային տարվա և (կամ) նախորդ հարկային տարվա ընթացքում ունեցել է անբողոքարկելի դարձած ստուգման կամ այլ վարչական ակտով արձանագրված՝

4) Օրենսգրքի 408-րդ կամ 410-րդ կամ 415-րդ հոդվածների պահանջներից որևէ մեկով խախտում,

5) Օրենսգրքի 412-րդ հոդվածի պահանջների երկու և ավելի անգամ խախտում,

6) Օրենսգրքի 416-րդ հոդվածի պահանջների երեք և ավելի անգամ խախտում:

Սույն մասի երկրորդ պարբերությունում նշված խախտումներին վերաբերող ստուգման կամ այլ վարչական ակտի վարչական կամ դատական կարգով բողոքարկման արդյունքում ստուգման կամ այլ վարչական ակտի ուժի մեջ մնալը հիմք չէ սույն մասով նախատեսված դիմումների հիման վրա եկամտային հարկի փոխհատուցված գումարները պետական բյուջե վերադարձնելու համար:»:

Հոդված 2. Օրենսգրքի 336-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~2~~3. ~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից եւ կիրառվում է 2024 թվականի հուլիսի 1-ից հետո հարկային մարմին ներկայացված՝ ստացված շահաբաժիններից ֆիզիկական անձի վճարած եկամտային հարկի փոխհատուցման դիմումների հիման վրա եկամտային հարկի գումարները փոխհատուցելու հարաբերությունների վրա~~:

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքով սահմանված սահմանափակումների կիրառության առումով հաշվի են առնվում միայն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված՝ սույն օրենքով սահմանված իրավախախտումները:

4. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (կոդ Կ-739-05.12.2023,08.04.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի վերնագրի հիշատակումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված իրավադրույթում ամրագրված հաջորդականությանը, որի համաձայն. «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Հստակեցնելու համար, որ նախագծով առաջարկվող կարգավորումները կիրառելի են միայն 2025 թվականի հունվարի 1-	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով ձևավորվող շահույթից բաշխվող շահաբաժիններից վճարված եկամտային հարկի փոխհատուցման դիմումների մասով՝ առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն մասով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցում չի կատարվում, եթե շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը 2025 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով ձևավորվող շահույթից բաշխվող շահաբաժիններից վճարված եկամտային հարկի փոխհատուցման դիմումները հարկային մարմին ներկայացնելու օրը ներառող հարկային տարվա և (կամ) նախորդ հարկային տարվա ընթացքում ունեցել է անբողոքարկելի դարձած ստուգման կամ այլ վարչական ակտով արձանագրված՝ 1) Օրենսգրքի 408-րդ կամ 410-րդ կամ 415-րդ հոդվածների պահանջներից որևէ մեկով խախտում, 2) Օրենսգրքի 412-րդ հոդվածի պահանջների երկու և ավելի անգամ		

			խախտում, 3) Օրենսգրքի 416-րդ հոդվածի պահանջների երեք և ավելի անգամ խախտում:»: Առաջարկությունը պայմանավորված է ծանրության տարբեր աստիճանի իրավախախտումների դեպքերում տարբերակված մոտեցումներ կիրառելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես, առանց լիցենզավորման գործունեություն իրականացնելու խախտում իրականացնելու և ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտումներ իրականացնելու դեպքերում տարբերակված մոտեցումներ կիրառելու անհրաժեշտությամբ, քանի որ առաջին դեպքում ծանրության աստիճանն ավելի մեծ է:		
3	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկը հրապարակելու՝ Հարկային օրենսգրքով սահմանված պահանջի կիրառություն որոշ դեպքերում հանգեցնում է հարկային կարգապահության մակարդակի նվազեցմանը, այն առումով, որ հարկ վճարողների մոտ կանխատեսելի է դառնում հարկային մարմնի գործողությունները և հարկ վճարողները հնարավորություն են ստանում պլանավորել հարկային պարտավորությունների կատարումը՝	Ընդունվել է: Նախագծում լրացվել է նոր՝ 2-րդ հոդված:	Ընդունվել է:

			առաջարկվում է 2024 թվականից սկսած ուժը դադարեցնել ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկի հրապարակումը: Այդ նպատակով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Հարկային օրենսգրքի 336-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Հստակեցնելու համար, որ նախագծով առաջարկվող սահմանափակումների կիրառության առումով հաշվի են առնվում միայն նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված խախտումները՝ առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքով սահմանված սահմանափակումների կիրառության առումով հաշվի են առնվում միայն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված՝ սույն օրենքով սահմանված իրավախախտումները: 2. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»: Առաջարկությունը	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			պայմանավորված է այն հանգամանքով, որ նախագծով առաջարկվող սահմանափակումը կիրառվի նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո կատարված իրավախախտումների դեպքում՝ ըստ էության նպատակ ունենալով ապահովել ավելի կանխատեսելի միջավայր: 2-րդ մասով առաջարկվող անցումային կարգավորման նպատակը 2024 թվականից սկսած ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկը հրապարակելու պահանջի վերացումն է:		